

Ա.ՂԱՏ ԽՕՍԿ

ՇԱԲԱԹ, 9 ՅՈՒՆԻՍ 1906, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

Ա Ր Դ Ի Ի Ն Ք Ը

Անցած կիրակի օր, Առաջնորդարանի մէջ, տեղի ունեցաւ Ալեքսանդրիոյ Գաւառային Երեսփոխանական ժողովի ընտրութիւնը, ամենայն կանոնաւորութեամբ և առանց ամենափոքր անհամոյ միջադէպի:

Ընտրողներու թիւն էր 880, բայց միայն 574 հոգի մասնակցած էր քուէարկութեան, իսկ 309 ազգայիններ դատապարտելի անհոգութեամբ մը չէին ուզած կատարել իրենց քաղաքացիական պարտականութիւնը,

Քուէհամարի գործողութիւնը տևեց մինչև գիշերուան ժամը 10 և հազիւ տասնուկէսին յայտնի եղաւ արդիւնքը:

Բացարձակ մեծամասնութեամբ երեսփոխան ընտրուեցան հետևեալ տասը անձերը.

Տիար Գառնիկ Չպուքճեան	518	քուէով
» Արմենակ Կամսարական	480	»
» Յ. Մութաֆեանց	464	»
» Հայկ. Էքիզէր	458	»

»	Միհրան Տամատևան	444	»
»	Յովհաննէս Շնորհքեան	362	»
»	Յ. Մուղալեան	344	»
»	Արթին Պէյ Լ'էիզեան	323	»
»	Յակոբ Պէքարեան	309	»
»	Ալեքսան ճէվահիրճեան	308	»

Իսկ հետևեալ տասնըվեց անձերը համեմատականի մնացին.

Տիար	Միհրան Խան Գալֆայեան	284	քուէով
»	Լևոն Մկրտիչեան	279	»
»	Տօքթ. Ս. Ժամկոչեան	259	»
»	Սահակ Արրահամեան	248	»
»	Վահան Խորասանճեան	246	»
»	Լևոն Պէրպէրեան	245	»
»	Կարապետ Տէրվիչեան	241	»
»	Յ. Ազնաւորեան	208	»
»	Եղուարդ Թուրշուճեան	195	»
»	Գրիգոր Մեղրոնեան	177	»
»	Տիգրան Կամսարական	161	»
»	Գէորգ ձիէրճեան	160	»
»	Պերճ Օհանեան	160	»
»	Գէորգ Իբէքեան	158	»
»	Միքայէլ Պէնկեան	155	»
»	Գէորգ Սարգիսեան	145	»

Կիրակի օրուան ընտրութեանց արդիւնքը, թէև ո՛չ ամբողջական, այսուհանդերձ կրնանք ըսել որ փայլուն յաղթանակ մը եղաւ սահմանադրականներուն համար:

Փողովուրդը, իր քուէովը, հաստատեց, նը-
ւիրագործեց օրէնքի գործադրութեան համար

տարիներէ ի վեր կռուողներու բոլոր ջանքերն
ու արարքները և անգամ մըն ալ դատապար-
տեց ինկած խնամակալութիւնը:

Անոնք որ ամիսէ մը ի վեր կը ջանային
փաստաբանել թէ ժողովուրդին մեծամասնու-
թիւնը հակառակ չէ խնամակալութեան և թէ
ի նպատ սահմանադրութեան եղած շարժումը
քանի մը պարագլուխներու յառաջ բերած իրա-
բանցումին արդիւնքն է, չարաչար հերքում մը
ստացան :

Խնամակալութեան կողմէ տեղական կա-
ռավարութեան մատնանիչ եղած „դատարկա-
պորտ խռովարարներու գլխաւորները, Տ. Մ.
Տամատեան, Յ. Շնորհքեան և Յ. Պէքարեան
ժողովրդին քուէներուն բացարձակ առաւելու-
թեամբը երեսփոխան ընտրուեցան, մինչդեռ
խնամակալութեան ապօրէն շէնքին հիմերը կազ-
մող „պատուարժան“ անձնաւորութիւնները
նոյնիսկ չկրցան համեմատականի մնալ: Հետա-
քըքրութեան համար հոս դնենք այդ անձերուն
ստացած քուէները:

Միքայէլ պէյ Բէիդեան՝ 102 քուէ, Վսեմ:
Բարթող փաշա՝ 77, Աստուր Պէյ Շէրիտճեան՝ 62
Տ. Միհրան Թելեան՝ 43, Տ. Լևոն Նիզամեան՝
24, Տ. Ս. Բիւրատ՝ 6, Տօքթ. Կ. Փաշայեան
Խան՝ 1, Տ. Յակոբ Ուղուրեան՝ 1, Տ. Զարէ-
եան՝ 0:

Կեցցէ՛ Ալեքսանդրիոյ ողջամիտ և պարկեշտ հայ գաղթականութիւնը:

Այս կիրակի համեմատականի մնացած քուէարկութիւնն ալ վստահ ենք ոչ նոյն ողջախոհ ուղղութեամբ պիտի կատարուի և Երեսփոխանական Ժողովը ամբողջանալով՝ պիտի կրնայ անմիջապէս գործի սկսիլ:

ՔՈՒՆՏՈՒՓԻՆ ՇՈՒՐՁԸ

Ժամը ինն էր երբ կիրակի առաւ մտայ քուէարկութեան ընդարձակ սրահը:

Ընարողները սկսած էին իրենց քուէները բերել:

Տ. Միհրան Տամատեան դրան մօտ կեցած, մեծ արարողակտի պաշտօնը կը կատարէր, մեծ լրջութեամբ, և քուէարկուները նեղ անցքէ մը կ'առաջնորդէր սեղանի մը առջև ուր բազմած էր երրորդութեան անձերէն՝ Տ. Եղուարդ Թուրչուճեան: Հոն պզտիկ հարցաքննութիւն մը տեղի կ'ունենար, ընարողին անունն ու մականունը կը նշանակուէր, տետրակի մը մէջ իր ստորագրութիւնը կ'առնուէր և յետոյ Տ. Թուրչուճեան կ'ըսէր ընարողին.

-- Հիմա կրնաք ձեր քուէն ձգել քուէտուփին մէջ.

Ընարողը կ'անցնէր Գեր. Առաջնորդին առջևէն, խոնարհութիւն մը կ'ընէր, քանի մը քայլ կ'առնէր և դուռը վեր վերցնելով կը տեսնէր խոշոր քուէտուփ մը, տեսակ մը տապանակ ուխտի, որուն երկու քովերը, Քէրովբէներու պէս կեցած էին Տ. Ռուբէն քահանայ Գաբրիէան և Տ. Յովնանէս Ծնորհքեան:

Ընարողը քուէն կ'երկնցնէր զէպի առփը:

--Կը խնդրեմ վարկեան մը սպասեցէք, կ'ըսէր Շնորհքեան, մարզը կեցնելով եւ չէպի գիմացի սեղանը դարձած կը հարցնէր.

--Պարտն թուրչուճեան, պարտնին անուճը արձանագրուած է:

--Այո՛.

--Քարի, պարտնը ստորագրած է տետրակին մէջ:

--Այո՛:

--Շատ բարի, միայն թէ մեղանով թէ մատիտով ստորագրած է:

--Մեղանով:

--Պնդրեմ, միւսիւ նշան, նայեցէք որ մեղանով է, սխալմունք մը չ'ըլլայ:

Պ. Նշան կը քննէ ստորագրութիւնը.

--Այո՛, մեղանով է:

--Կ'աղաչեմ, միւսիւ թուրչուճեան զուն ալ նայէ...

--Այո՛, այո՛, մեղանով է...

--Տերեմն բարի.

Մարզը քուէ ձգելու վայրկեանը վերջապէս հասած համարելով նորէն քուէն կ'երկնցնէ:

--Կ'աղաչեմ, բոպէ մը սպասեցէք, կ'ըսէ Շնորհքեան, ձեռքի արգելիչ շարժում մը ընելով, կարծեմ, կ'աւելցնէ, զուք նամակով քուէ մըն ալ բերիք հետեւնիդ:

--Ո՛չ, կը պատասխանէ մարզը, ես միայն իմ քուէս բերած եմ:

--Բայց ներս մտած ատեննիդ կարծեմ նամակ մը հանեցիք ձեր գրպանէն:

--Ո՛չ, քուէս պահարանին մէջ դրած էի, պահարանէն հանեցի որ տուփը ձգեմ...

--Բարի, արդեօր պահարանը կրնա՞մ տեսնալ:

--Ահաւասիկ:

--Այո՛, պահարան է, չեմ ըսեր որ պահարան չէ,

բայց... ընտրողական ժողովի կողմէ զր'ուած պահարանը չէ:

--Կարծեմ պարտաւոր չէի անպատճառ պահարանի մը մէջ դնել քուէս և մասնաւորաբար ընտրողական ժողովի պահարանին մէջ.

--Շեռակ է, շատ չիտալ է ձեր դիտողութիւնը և ճիշտ ատոր համար է որ զարմանալի կը թուի ինձ ձեր քուէն պահարանի մը մէջ դրած բլլալնիդ, քանի որ դուք ալ կը խոստովանիք թէ պարտաւոր չէիք:

--Միւսիւ Շնորհքեան քանի որ ս և է անկանոնութիւն մը չի կայ եղածին մէջ, կրնաք բնգունիլ պարունին քուէն, կը միջամտէ ընտրողական ժողովի անդամներէն մին:

--Բարի... բայց արդեօք ուրիշ դիտողութիւն մը ընող կայ, կը հարցնէ օրինապահութեան Կերբերոսը:

--Ձէ', չէ, չէ, կը լսուի ամէն կողմէ:

Եւ վերջապէս մարդը քուէն ձգելով կը մեկնի, մինչ Շնորհքեան կասկածոտ, անվստահ, կը մրմռայ քթին տակէն.

--Բարի, բայց...

Կէսօրին քուէարկութեան գործողութիւնը կաւարտի և Շնորհքեան կը սկսի քուէտուփը կնքել կարմիր մեղրամսմով: Չուաններ կ'անցուին քուէտուփին չուրջը և տուփին վեց երեսները կը ծածկուին կնիքներով և սակայն բաւական չին. հատ մըն ալ հոս, հատ մըն ալ հոն. մէկ հատ ալ աս կողմը, սա կողմն ալ քիչ մը, սա չուանին ծայրը դուրս մնացեր է, հոն ալ կնիք մը, փայտին վրայ փոքրիկ խոռոչ մը կայ, կնիք մըն ալ հոն, հատ մըն ալ... բայց ալ Առաջնորդարանի մեղրամսմի պաշտրը հասած է և կնքման գործողութիւնը ճնովին դործով» հարկ կ'ըլլայ վերջացնել:

--կարծեմ կրնայիք քանի մը ծրար մեղրամոմ աւելի առնել: զիսողութիւն կ'ընէ Տ. Շնորհքեան Տ. Նշան Ամատունիին, մնծ ծախսի դուռ մը չէր, և մանաւանդ անհրաժեշտ ծախք մըն էր, մինչդեռ երեք տարիէ ի վեր Առաջնորդարանը չա՛տ, խիստ չա՛տ աւելորդ ծախսեր ըրած է կարծեմ... և առանց քօնթրոլի, չեմ գիտեր թէ արդեօք մասնաւոր զիտո՞ւմ մը, թաքուն նպատակ կը կար մեղրամոմի խնայողութեան մէջ:

--Ի՞նչ կ'ըսէք, միւսիւ Շնորհքեան, միթէ կը կասկածիք որ...

--Ո՛չ, չեմ կասկածիր... թէ և երևոյթները կրնային արդարայնել զիս եթէ կասկածէի, բայց չեմ ուզեր կասկածիլ, որովհետեւ չա՛տ, չա՛տ գէշ կարծիք պիտի պարտաւորուէի ունենալ կարգ մը մարդոց մասին, թէ և այդպիսի կարծիք մը ոտնենալու համար դժբախտաբար չա՛տ, խիստ չա՛տ պատճառներ կարելի է յառաջ բերել... բայց ինչ որ է, չեմ կասկածիր, որ և է կասկած չունիմ... բարի, չա՛տ բարի, միայն թէ կարելի էր քանի մը ծրար մեղրամոմ աւելլ առնել... գոնէ՛ կասկածներու տեղի չտալու համար...

Երկու ժամ դադարէ մը ետք քուէները կարդալու դործողութիւնը կը սկսի, այս անգամ եկեղեցիին մէջ: Կարելի եղածին չափ չուտ աւարտուելու համար քուէները կը կիսուին և երկու սեղաններուն վրայ տեղի կ'ունենայ գործողութիւնը, սեղաններէն մին՝ Շնորհքեանի և միւսն ալ Մ. Տամատեանի հսկողութեան տակ զրուած: Բաջի իրենցմէ, ամէն ոք հսկողի պաշտօն կը ստանձնէ, երեք թուղթերու վրայ կը նշանակուին կարգացուած քուէները: մինչդեռ շատեր ալ մէյլէի թղթի կտոր առած ձեռքերնին, անպաշտօն

հակողութիւն մը կը կատարեն իրենց անձնական հասիւնս:

Յոսանդն ու ոգեորութիւնը ընդհանուր է, բայց ոչ այնչափ բռնոն որքան նախորդ թաղական խորհրդի ընտրութեան ատեն: Հակառակութեան ոգին կը պակսի. երկու որոշ կուսակցութիւններ չի կան իրարու դէմ, ընտրելիներու նկատմամբ եղած պայքարը շատ մակերեսային է, գրեթէ արուեստական, գրեթէ չինձու: Շնորհքեանի քով նստած է Լեոն Մկրտիչեան, Տամասեանի քով՝ Գէորգ Իրէքեան, Բարթողեան խմբակը բոլորովին բացակայ է:

Ժամը գիշերուան տասն է և դեռ քուէները չեն աւարտած. Շնորհքեան անընդհատ ձակատը կը սրբէ որ միշտ կը շարունակէ քրտնիլ, այսուհանգերձ վայրկեան մը չձգեր իր աթոռը:

Վերջապէս ժամը տասներմէկին Շնորհքեան պաշտօնապէս կը ծանուցանէ ընտրութեանց արդիւնքը և կ'աւելցնէ.

--Ուրեմն, գոչենք ամէնքս միասին՝ «Կեցցէ՛ Սահմանադրութիւն:

Բարի՛, չա՛տ բարի, այո՛

Կեցցէ՛ Սահմանադրութիւն և կեցցէ՛ Յովհաննէս Շնորհքեան. որ ամբողջ տասներինգ ժամ քուէարկութեան հակելէ ետքը զժգոհ մեկնեցաւ ըսելով.

--Պէտք էր որ քուէարկութեանց արդիւնքին ցուցակը պատրաստէինք հիմակ, բայց երեք չորս ժամու պործ է և շատերը յոգնած ըլլալու են, ուստի վաղուան ձգենք... ևս ալ արդէն կարողութիւն չունին:

Վսե՛մ, պարզապէս:

ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ԱՂԱՍԻԻ

ՆԱԽԿԻՆ ՊԵՏ ԵՒ ԱՅԺՄ ՀԵՂԻՆԱԿ
«ԶԼԵԹՈՒՆԻ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ»

3

Կ'ենթադրէք անշուշտ որ, մարտաշունչ տողերը պակաս չեն այս դիւցազներգութեան մէջ, որ առանց անոնց պիտի նմանէր վառօդին փայլակներէն ու որոտներէն թափուր պատերազմի մը.

Զինուորները կ'երգեն.

«Վառուած խանդով մենք ռազմական՝
Անդաւ մնալ կուգանք ուխտի,
Քալէնք քենէ պիտ' անբաժան,
Դրօշ ապստամբ ժողովրդի
Ու մեր սիրտեր միշտ յուսալից՝
Պիտի կռուինք քեզ կուսակից.
«Վրէժ» կ'ըլլայ մեր աղաղակ,
«Ազատ» կ'սմ' մահ փառապսակ»:

Մտիկ ըրէ՛ք Զէյթունի քայլերը.

«Զէյթունցիներ ծագեց արև
Պէրզընկայի սարին վերև,
Մեր սրտերու հայրենասէր
Արթննալու ժամն է հասեր:
Ստրկութեան անարգ շղթան
Գինն է յաճախ խաղաղութեան
Զէնքերս առած վազէնք ի մարտ,
Հոչակելու մեզ ազատ մարդ»:

Իսկ հետագայ տողերը ուր նկարչագեղ ու ընտանի բացատրութիւնները կը մրցին վսեմ և օղաշունչ բանաստեղծութեան մը թոհչներուն հետ, ինչպէս պի-

տի ընէր բազի մը տաստանուտ և գետնտամ գնացքը
լերանց արծիւի մը ճախրին հետ.

Կեցցէ՛ մեր Զէյթուն, կեցցէն իր քաջեր,
Թուրքը հաւու պէս մենէ կը փախչէր,
Պէրիտի լեռնէն առած ենք սնունդ,
Զիւնին մէջ մեզի տուած են ծնունդ.
Բազուկ ու կրծք ունինք երկաթի,
Արիւն կը խմանք փոխարէն կաթի
Քսան հազար թուրք մէկ որ թաղեցինք,
Ու ձիւանն այսօր նորէն ն'ըկեցինք:
Չ'առնուիր Զէյթուն, Հայուն է վախը վ,
Թուրքը մեր առաջ եղած է վախով:
Կեցցէ՛ մեր Զէյթուն, կեցցէն իր քաջեր,
Թուրքը հաւու պէս մենէ կը փախչէր:

Հեղինակը համեստօրէն «յաղթութեան երգ» անու-
նը կուտայ այս կտորին: Թերևս կը կարծէք որ առ ի
չդոյժ գուտ բանաստեղծական արժանիքներու, խազը,
օգտուելով հեղինակին բացատրիկ դիրքէն Զէյթունի
վերջին ապստամբութեան միջոցին՝ կը ներկայացնէ
տարբեր սեռէ յատկութիւններ, ապրուող կեանքի շա-
հեկանութիւն մը, «քաղաքական նշանակութիւն մը»,
ոսովագիտական հետաքրքրաշարժ յայտնութիւններ,
իրական մանրագէտեր ճարտարօրէն դրուագուած, վեր-
ջապէս կենդանի, յանկուցիչ գործողութիւն մը և «միս-
ու ոսկոր» ունեցող թիրեր:

Կարևոր չէ երեակայել այսչափ անջիղ, անկենդան
և սնկապակից գործողութիւն մը և այսքան անիրա-
կան. մարդեր կուզան կ'երթան, անձեր բաներ մը կ'ը-
սեն, կամ կ'երգեն, կամ կը պատմեն. բայց շահկան
ոչ մէկ տեսարան, ոչ մէկ դրուագ: «բան մըն է կ'եր-
թայ կոր, թո՛ղ տուր երթայ...» Ի՞նչ դրամադրիկ,

նկարչագեղ, գիւշագնեհրգական գրուագներ կրնար քաղել Չէյթունի ապստամբութենէն՝ մէկը որ մասնակցած ըլլար անոր և բանաստեղծ ըլլար միևնոյն ատեն: Ու բնաւ Չէյթուն երթալու պէտք չի կար աւանկ խեղճուկրակ բան մը գրելու համար անոր վրայ: Գրելու մարմաջէն բռնուած ո և է Հայ պիտի կրնար իր նստած տեղէն՝ նոյնիսկ եթէ Գահիրէն ըլլար ատ տեղը՝ արտագրել բան մը այսքան անգէտ ու այսքան անարժան Չէյթունի ապրած վերջին գիւշագնեհրգութեան:

Աւաջին տեսարանը երբ կը բացուի, կը տեսնանք նազար իշխանը և խումբ մը կարեոր Չէյթունցիներ: Ահա՛ սքանչելի առիթ մը հեղինակին համար մեզի հանգիստեսն ընելու «քաջարի և խորամանկ» Չէյթունցուոց մէկ պատերազմական խորհուրդին, անոր՝ ուր ցրման դիմադրութիւնը կը զձուռի: Ի՞նչ է Չէյթունցուոց ազգագիտութիւնը, ո՞րն է իրենց կուռի յատակագիծը, ահա՛ վերին աստիճանի շահագրգռող բաներ զորս պիտի ուզէինք սորվիլ: Ու տեսարանին գլուխը դրուած մէկ քանի բացատրական տողերը մեր հետաքրքրութիւնը կը սաստկացնեն. «վարագոյրը քաշուած ատեն, կը թուի թէ, նազար իշխան գազտնի խորհուրդ մը կազմած է Չէյթունցիներուն հետ, որ «բոլորած են զինքը շրջանակի»: Արդեօք ի՞նչեր պիտի իմանանք. շունչերնիս բռնները և մտիկ ընկներ, բռններ շունչերնիս և պահներ ու ամբարներ զայն այնչափ, որչափ պէտք է հսկայական քրքիջի մը հողին կազմելու համար անով, երբ պիտի տեսնանք յուսահատական ունայնութիւնը և անհուն ոչնչութիւնը այս «ազգական խորհուրդին»

Իշխանը

Ուրեմն պատրաստ էք կոռւի դալ ինձի հետ

--Սյո՛, Տէ՛ր, չի թողուլ կ'երդնունք քու արահետ.

Հոս այն երզը զոր յիշեցինք արդէն «վառուած խանդով», են. մենք Ձէյթունդիք ճանչած էինք նը-
ւազ հռետոր և աւելչ գործնական ինչ և իցէ.

Իշխանը

Քաջութեան այդ հզօր ձայնէն,

Սնկախութեան այդ ծարաւէն,

Կը ճանչնամ քաջ որդիքն երկրի. են...

Եւ երբ նազար իշխան կ'աւարտէ իր ուսուցիկ
ճառը,

Սմբերգը կը դռայ

Ու թող ապրի մեր նազար իշխան.

Իշխանը (վեհօրէն)

Ուրախ եմ:

Բայց իր ուրախութեանը մէջ իշխանը չի մոռնար
թէ ինք պեան է ապստամբ բանակին, թէ իր ձեռքն
է անոր ճակատագիրը և թէ հետևարար իրեն անկ է
ոսգմագիտութեան և պատերազմական իմաստութեան
պահանջած խրատներն ու ուսուցումները տալ իր
գունդերուն. ուստի, «ուրախ եմ»էն անմիջապէս յետոյ,
կ'ըսէ հետևեալ ծանրակշիռ, խորիմաստ ու փրկարար
խօսքերը.

Բայց իբր ճշմարիտ դաւադիր,

Չմոռնանք թէ պէտք է ըլլալ խիստ ուշադիր.

Պէտք չէ որ տանք նշան մը յայտարար,

Ոչ դէմք մը կասկածի, միայն լուռ ու խաւար

Եւ պիտի տեսնենք շուտ օրերը նորոգուած:

Քիչ մը անդին՝

...Պէտք է ժողովինք կէս գիշերին միւս անգամ

Բանակցիլ հոս կուզեն վերելը Պէրիտի.

Նորէն մեր որոշում պիտ' ըլլայ խիստ ծածուկ,
Բանալու չենք մենք ծակուծուկ,
Կուռելու համար դեռ քանի չենք պատրաստի,
Կը կորսուենք թէ ոչ անյոյս»

Այս տողերը կարգալէ վերջ՝ ալ չենք զարմանար
չիտակը թէ ինչպէս Զէյթուն կրցաւ գլուխ ելլալ ա-
հագին բանակներու հետ. թո՛ղ որ այս զազանիքը սա
տողերով ալ կը պարզուի.

Ա՛լ մեզ ծաղրել չի պիտի կրնար.
Եւրոպա մեզի կանգնած է կռնակ.
Քովս ունիմ պատրաստ չորս հազար պարման,
Բոլորն ալ մեռնիլ ուխտած անպայման:
Բայց Թուրքն յաղթուած պիտ' տայ մենէ խոյս
Եւ պիտի ծագի մեզ Նոր-Արշալոյս:

Եւ այսպէսով կը լմնայ Զէյթունի պետերուն պա-
տերազմական խորհուրդը. «Թաղական խորհուրդ»ի մը
զաւեշտականութեամբ, պիտի համարձակէինք ըսել:

Կարճ կապենք, Մարդ ինչպէն ա՛լ կը ձանձրա-
նայ. մանաւանդ որ մեր առջև գտնուող գիրքը, խըն-
դալէն լալիք բան է, չիտակը. Բայց լմնցնելէ առաջ,
յիշենք մէկ քանի տողեր, որոնցմով մեր ընթերցողնե-
րը պիտի կրնան չափը առնել հեղինակին անսահման
յաւակնութեանց:

Գիրքին սկիզբը գրուած «Զօն»ին մէջ, հեղինակը
խօսքը ուզելով Զէյթունի այն հերոսներուն որոնք
քաջաբար ինկան պատերազմին մէջ, յանմահութեան
վերականգնելու համար, կ'ըսէ սա ցնորեցուցիչ խօսքը,
որուն չենք գիտեր թէ միամտութի՛ւնն է աւելի ար-
խուր, թէ ամբարտաւանութի՛ւնը աւելի ծիծաղաշարժ.

Ես որ կարդացի ձեզ մահուան հրաւէր
Քիչ մը կ'սփոփիմ տալով այս նուէր.

Ապահովարար, մահուան հրաւերէն աւելի մահացուցիչ բան մը եթէ կար այդ հերոսներուն համար, ան ալ այս նուէրն էր, պարօն:

Ու չի բաւականանալով, կ'աւելցնէ աւելի վարը-

Ու թող ձեր անուն՝ Զէյթունին հանգոյն՝

Այս գրքոյկիս մէջ մնայ միշտ կանգուն:

Բարեբաղդարար այս գրքոյկն պէտք չունի անոնց անունը. ապա թէ ոչ գործը շատ դէշ էր:

Գիրքին վերջը կարևոր վրիպակ տիտղոսին տակ հեղինակը մէկ քանի աննշան սխալներ սրբագրած է, մեղի կը թուի թէ գիրքը ծայրէ ի ծայր վրիպակ է և թէ կարևոր, ամենակարևոր, կարևորագոյն վրիպակը հրապարակ հանելն է: Ամէն բան առոր մէջըն է, Ա. մ. է՛ն :

Եւ այժմ կը ձգենք այս գիրքը հանգիստ եւ եթէ հեղինակը կուզէ՝ կը կարդանք անոր մէկ հոգեհանգիստ, ինչպէս պիտի ըսէր անհանգիստ Աղասին:

Շ Ի Ր Ա Կ

Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ «Շիրակ» ամսաթերթը, որ ժամանակէ մը ի վեր դադրած էր, տպարանական ղժուարութեանց պատճառաւ, վերսկրսած է հրատարակուիլ, նոյն ուղղութեամբ և նոյն ծանօթ գրագէտներու աշխատակցութեամբ:

Երկրորդ տարեշրջանի առաջին թիւը ստացանք այս միջոցիս. յաջորդ թիւով պիտի խօսինք երկարօրէն այս կարևոր գրական հրատարակութեան մասին:

Շիրակի հասցէն է՝ Շիրակ, պուաթ բօսթալ, թիւ 87, ԳԱՀԻԲԷ:

Սրտանց յաջողութիւն կը մաղթենք Շիրակի, որուն առժամեայ դադարումը ճշմարիտ զրկանք մը եղաւ հայ գրասէր հասարակութեան համար:

ԴԵՌՆՆԻՍ ԶԷ՞

Տարօրինակ իրողութիւն մը կը պատմուի որուն շէնք ուղեր հաւատալ մինչև թերթիս մասնակի յանձնուած պահուն:

Իբր թէ երէկ, կէս գիշերը երկու ժամ անցած, մեր նորընտիր երեսփոխաններէն չորսը, ծպտուած և զիմակաւոր, սղոց, ուրազ, բահ, բրիչ և այլ հարկաւոր գործիքներով զինուած, Ապու Տարտար փողոցը կուգան և կը փորձեն եկեղեցապատկան ազգային շէնքը հիմերէն քակելով գողնալ տանելու:

Բարեբաղդաբար, նոյն միջոցին հոնկէ կ'անցնի Տ. Յակոբ Ուղուրեան Համբարձում ազայի ծրարը ձեռքը բռնած: Նախկին յարգելի խնամակալը տեսնելով այդ կասկածելի մարդիկը որ ալ աւելի կասկածելի գործողութեան մը վրայ են, կը կասկածի և անմիջապէս իմաց կուտայ կաֆիրներուն որոնք կուգան և չորս նորընտիրները կ'առաջնորդեն Աթթարինի քառաքօլը:

Կ'ըսուի թէ հո'ն ամէն բան խոստովանած են: Իրենց նպատակն է եղեր շէնքը գողնալէ ետքը, 64 արատթըմանները սղոցով իրարմէ զատել և մէջերնին բաժնել:

--Ձեր միւս ընկերները տեղեկութիւն ունի՞ն, կը հարցնէ մուսալիներ:

--Այո', ժողովով որոշեցինք, անոնց ալ բաժին մը պիտի տայինք, կը պատասխանէ երեսփոխաններէն մին միամտութեամբ:

Եւ Տ. Ուղուրեան դուրս կ'ելլէ քառաքօլէն ըսելով:

--Ասոր ասանկ ըլլալիքը մենք առջի օրէն գիտէինք:



“ ԱԶԱՏ ԽՕՍՔ ”, Ի Պայմաններ

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԸ շՐՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԾ ՕՐԵՐԸ

Եզիպտոսի համար բաժնեզինն է

40 ԹՅԻԸ

40 ՂՐԵ. ՈՂԶ

20 ”

20 ” ”

Ա Ր Տ Ա Ս Ա Հ Մ Ա Ն

ԵՒՐՈՊԱ 40 ԹԻԻ 10 ՖՐԱՆՔ

ՌՈՒՍԻԱ ,, ,, 4 ՐՈՒՊԼԻ

ԱՄԵՐԻԿԱ ,, ,, 2 ՏՈԼԱՐ

Բաժանորդագրուիքներ կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԵ. ՈՂԶ

“ ԱԶԱՏ ԽՕՍՔ ”, Ի համար բաժնեզինն կա՛մ
որ և է գրուածին պէտք է ուղղել հե-
տևեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPTE)

Մանուգրուներ կրնորունուին մասնաւոր
պայրաններով:

Պատասխանաւոր - Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր. Փոքր Գ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ Ալեքսանդրիա